ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
Գ. ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ
N 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Արմավիրի մարզ,
ք.Էջմիածին ,Մանուշյան 2/3
vagharshapat8@schools.am
Հեռ.0231-7-21-71

N 151
22.09. 2023

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարար Ժ.Անդրեասյանին

Հարգարժա՛ն տիկին Անդրեասյան

Հայտնում ենք Ձեզ , որ «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունում առաջացել է թափուր աշխատատեղ հետևյալ առարկայից՝ «Անգլերեն » (9 դասաժամ) :

Կից ներկայացնում ենք ուսուցչի թափուր տեղի համար տրված հայտարարության տեքստը :

Առդիր՝ 1 էջ:

Տնօրեն՝ Հ.Գրիգորյան

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն (9 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 20 -ից մինչև սեպտեմբերի 4 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. հոկտեմբերի 6 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոցում, հասցեն՝ քաղաք Էջմիածին Մանուշյան 2/3 :
Տեղեկությունների համար զանգահարել (98)40-68-30 հեռախոսահամարով :